ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ք.Եղեգնաձոր 24 սեպտեմբերի 2018թ.

ՀՀ Վայոց ձորի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> ընդլայնված նիստ

Նիստի աշխատանքներին մասնակցում են՝ փոխմարզպետ, հանձնաժողովի նախագահ Ն.Ասատրյանը և հանձնաժողովի անդամները:

Նիստին հրավիրված են ՀՀ Վայոց ձորի մարզի ԲՍՓՀ նախագահը,Եղեգնաձորի և Վայքի ՍԱՏԳ-ների աշխատակիցները, Եղեգնաձորի թիվ 1 և 2 հիմնական դպրոցների ներառական դասարանների ուսուցիչները, համայնքների սոցիալական աշխատողները, լրագրողներ, <<Լիարժեք կյանք>> ՀԿ-ի ներկայացուցիչները և ՀՀ ԱՍՀՆ հաշմանդամների հինահարցերի բաժնի աշխատակիցները:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին Կոնվենցիան և նրա պահանջների կատարմանն ուղղված աշխատանքները Հայաստանի Հանրապետությունում:
2. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021թթ. համալիր ծրագիրը՝ ուղղությունները, պատասխանատուները, թիրախային ցուցանիշներին հասնելու միջոցառումները/ *Զեկուցող՝ Աննա Հակոբյան, ՀՀ ԱՍՀՆ հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ/:*
3. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:
Զեկուցող՝Ռիմա Եգանյան ՀՀ ԱՍՀՆ հաշմանդամների հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ
4. ԱՀԿ ՖՄԴ ներդրման հայեցակարգ, սկզբունքները, գաղափարախոսությունը, ներդրման նպատակները, կատարված աշխատանքները :ԱՀԿ ՖՄԴ՝ առողջական և սոցիալական բաղադրիչները:
Զեկուցող՝ Աննա Հակոբյան, ՀՀ ԱՍՀՆ հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ
5. ԱՀԿ ՖՄԴ կիրառման առավելությունները ծառայությունների մատուցման գործընթացում:
Զեկուցող՝Տաթև Ղազարյան «Լիարժեք կյանք» ՀԿ էրգոթերապիստ
6. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները, իրականացվող ծառայությունները
Զեկուցող՝ Ռիմա Եգանյան, ՀՀ ԱՍՀՆ հաշմանդամների հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հսկողությանուն սահմանել <<Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021թթ. համալիր ծրագրով>> ՀՀ Վայոց ձորի մարզում նախատեսված աշխատանքների կատարման ուղղությամբ:

2. Մամուլի և շահագրգիռ ՀԿ-ների օգնությամբ կազմակերպել իրազեկման աշխատանքներ ԱՀԿ ՖՄԴ ներդրման հայեցակարգի, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, հաշմանդամության ոլորտում իրականացվող ծառայությունների վերաբերյալ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ն.Ասատրյան

Քարտուղար Յ.Բաբայան

24.09.2018թ.